



W R W F W S

Թիվ թ. — ԵՐԳԱԿԱ ԺԿ. 1884 ՏԱՐԻ ԺԿ. ՕԳՈՍՏԱ 31.

ԿՐօՆԱԿԱՆ

ԱՏՈՒԳՎԱԾ. կ
1952 թ.

ԱՅԱՍՏԵՂԱՎԱՐԱՆ ԱԴՐԵՔԵԼՈՒԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

($\overline{w_1}x - y - t$, $0, x - y - t$, $t^2 + 1, \dots$)

~~БИБЛИОТЕКА~~ № 911

91 • D

Մակեդոնական լայնածաւալ տէրութիւնը Ալէքսանդր Մակեդոնացու մահից յետոյ զանազան մասերի բաժանուեց և այսպէս թուլանալով՝ արեւմուռքում տեղի տուեց Հռովմէական կայսերութեանը, իսկ արեւելքում՝ Արշակունի գեղագիտութեան։

Հռովմէական կայսրութիւնն էլ երկու բաժանուեց — Արևմրտեան և Արևելեան։ Արևմտեան կայսերութեան մայրաքաղաքն էր Հռովմ, իսկ Արևելեան կայսրութեան մայրաքաղաքը՝ Կոստանդնուպօլիս։ Այդ երկու քաղաքները իրանց քաղաքական նշանակութեամբ որոշ տեղ բռնեցին նաև քրիստոնէական եկեղեցու մերարերութեամբ, որովհետեւ Հռովմը խր պապական աթոռով կենցրօն գտրձաւ արևմտեան քրիստոնեայ ազգերի՝ որոնք Կաթոլիկ եկեղեցի են կոչում, իսկ Պօլիսը խր տիեզերական կոյուած պատրիարքական աթոռով կենցրօն պարձաւ արևելեան

քրիստոնեայ աղքերի՝ որսնք օրիժոպոքս կամ՝ ուղղափառ եկեղեցին են կազմում։ Այս երկու եկեղեցիների՝ հետ ևս Հայաստան եայց եկեղեցին յարաբերութեան մէջ է եղել, որպէս առանձին ինքնուրոյն եկեղեցի։

Հայաստանեայց եկեղեցու կազմակերպութեան հետ մեծ յարակցութիւն է ունեցել Արշակունի ցեղավիառութիւնը՝ որ երկու հարստութիւն էր բաժանուած, արեւելեանը՝ Պարսկաստանում իսկ արեւմտեանը՝ Հայաստանում։ Այս երկու ցեղակից հարստութիւնները սակաւ բացառութեամբ միմեանց զօրավիգն էին երբ հարկ էր լինում մէկին կամ միւսին պատերազմ՝ ունենալ Հռովմէական կայսերութեան կամ այլ տէրութեանց հետ։

Պարսից նախարարներից Արտաշիր Սասանեանը Արտաւանին սպանելով՝ վերջ դրեց Պարսկաստանում Արշակունի կամ Պարթեական հարստութեանը և ինքն պարսիկ նախարարների հաւանութեամբ 226 թուին թագաւորելով Արտաւանի տեղ՝ Սասանեան հարստութեան հիմնադիրն զարձաւ։ Այս ժամանակ Հայաստանում թագաւորումէր Խոսրով Ա., մեծն, որ ամեն ջանք գործ դրեց նորից հաստատել Արշակունի հարստութիւնը Պարսկաստանում՝ զանազան պատերազմներով նեղելով Արտաշիր Սասանեանին, որ մտածումէր Խոսրովին սպանել տալ և Հայաստանում ևս Արշակունի հարստութիւնը տապալել, որպէս զի ինքն և իրանով սկսուած ցեղավետութիւնը կասկածելի սահմանակից չունենայ։ Այս մտածունքը Սասանեան ցեղավետութեան աւանդական քաղաքականութիւնը դարձաւ։ Արտաշիր Սասանեան իւր այս նպատակը յառաջ տանելու համար Պարսկաստանի Պահլաւիկ կամ Արշակունի նախարարներից նորան, ում որ յաջողի Խոսրովին սպանել, խոստացաւ Քուշանաց աշխարհը և Բահլ Հայրենական քաղաքի թագաւորութիւնը և իւր երկրորդը լինելու իրաւունքը։ Սուրէնեան — Պահլաւ Անակ խոստացաւ սպանել Խոսրովին, ուստի և 256 թուին իւր եղբօր հետ եկաւ Հայաստան կեղծելով որպէս թէ իբրև Արշակունի՝ ցեղակից Խոսրովի և Արտաւանի, փախչումէ Արտաշրի հալածանքից։ Խոսրով Զիմանալով Անակի եկաւորութեան բուն պատճառը, սիրով ընդունեց և ամենայն մտերմութեամբ սկսեց վարուել։ Անակ այս մտերմութիւնից օգուտ քաղելով՝ մի անգամ որսի ժամանակ Խոսրովին առանձին գտնելով իւր եղբօր հետ նորա մերայ յարձակուեց և մա-

Հայու վէրք տուեց ու ջանք արեց փախչել. Խոսրով գեռ յըմեռած հրամայեց Անտկին տնով տեղով ջնջել, ուստի եւ, Հայոցնախարարները զօրքերով հետամուտ եղան Անտկին ու նորա եղրօր, և Երասի գետի մօտ բոնելով գետահեղձ արին: Անտկի տանից ազատուեցին միայն իրանց գայեակների ձեռքով զանազան կողմեր փախցրած նորա երկու սրդիքը, անդրանկին, որի անունը Սուրէն էր, նորա գայեակը փախցրեց Պարսկաստան, իսկ կրտսերին՝ Կեսարիա:

Ըստ աւանդութեան *), երբ Անտկ Հայաստան էր գալիս, ճանապարհին Արտազ գաւառում Ս. Թաղէոս առաքեալի գերեզմանին մօտ գիշերօթս առնելով՝ նորա Ոգոհէ կինը յղացաւ և 257 թուին ծնաւ Վաղարշապատ քաղաքում մի արու զաւակ, որին սոնտու կարգուեց Գամրաց Կեսարիա քաղաքից եկաւոր Հաւատացեալ մեծասուն Եփթաղիոսի քոյր Սովիան՝ որ Կեսարիայում ամուսնացած լինելով Բուրդար անուն մի Պարսկի հետ, Անտկի Հայաստան եկած ժամանակ իւր մարդու և իւր եղբայր Եփթաղիոսի հետ Վաղարշապատումն էր գտնվում. Անտկի տան կոտորածի ժամանակ Սովիան կարողացաւ թագցնել մանկանը և երբ վտանգն անցաւ, առաւ և իւր Եփթաղիոս եղրօր ու Բուրդար ամուսնոյ հետ գնաց Կեսարիա:

Մանուկը Եփթաղիոսի և Սովիայի իննամոց տակ մկրտուեց և կոչուեց Գրիգոր, որ քրիստոնէական Հաւատով զարգացաւ և 276 թուին ամուսնացաւ Գաւիթ անուն Հաւատացեալի Մարիամ աղջրեաց հետ, և ունեցաւ երկու զաւակ Արթանէս և Արիստակէս:

Խոսրովի մահից յետոյ Արտաշիր Սասանեանը 260 թուին մտաւ Հայաստան, երկիրը քար ու քանդ արեց, սրից անդրեց Խոսրովի տունը, որից աղատուեցին երկու մանուկ Տրդատ և Խոսրովի դուխու: Խոսրովի իստին Ամատունեաց 0տայ նախարարը փախցրեց Ամուրն - Անի, իսկ Տրդատին՝ Արտաւազդ Մանդակունին փախցրեց Կեսարիա և այստեղից ևս Հռովիմ, ուր հոսակն առնելով՝ Տրդատ սկսեց ծառացել կոյսեր զբանը, Ախլիանոս մեծ իշխանի ձեռքի տակ:

Գրիգոր իմանալով իւր հօր արարքը, Հայաստանի աւերածը և Խոսրովի տան սրածութիւնը՝ 280 թուին մտաւ Տրդատի մօտ ծառայութեան՝ իւր հօր յանցանքը քաւելու համար. նորա կինը Մա-

(*) Խոր. Գիրք. Բ. գլ. ՀԴ. Յովհ. Կաթուղիկ. Թթառ. Երես 23:

րիսմ՝ Արիստոակէս մանկան հետ մտաւ կուռամաց անտպատը, իսկ Վրթանէս մնաց Կեսարիայում, ժամանակին ամուսնացաւ և ունեցաւ երկու որդի Գրիգորիս և Յուսիկ:

Գրիգոր իւր հաւատաբրմութեան համար Տրդատին շատ սիրելի էր. Տրդատ մեծամեծ քաջութիւններ գործելուց յետոյ Դիոկղետիանոսից իբրև Հայրենի ժառանգութիւն 286 թուին ստանալով Հայաստանի թագաւորութիւնը երբ հռովմէական զօրքերով գալիս էր Հայաստան՝ նորան ուղեկից էր նաև Գրիգոր։ Տրդատ հասնելով Եկեղեց գաւառով Երիզա աւանը, մեծամեծ զօհեր արեց Անահտի մեջենին և հրամայեց Գրիգորին, որ նա ևս պսակ, ծառերի թաւ սասեր և ծաղկավնջեր նուիրի, բայց Գրիգոր յայտնելով իւր քրիստոնեայ լինելը՝ հրաժարուեց. Տրդատ լսելով այս, շատ զայրացաւ, յանդիմանեց Գրիգորին և նոյն օրը բանալը գրեց։ Հետեւալ օրը ատեան բերուելով, Գրիգոր հրապարակաւ խոստովանեց իւր քրիստոնէութիւնը. սկսեց քարոզել և յայտնապէս ցոյց տալ կոքերի ստութիւնը և կուպաշատութեան մոլորութիւնները։ Տրդատ ամեն հնարք ի զուր համարելով Գրիգորին համոզելու, սկսեց չարչարել նորան և տասն երկու զանազան սոսկալի տանջանքներ ապօւց յետոյ՝ երբ լսեց թէ նա իւր հօրը սպանող Անակի որդին է, աւելի ևս զայրացաւ և կապած ձեռքերով ու ոտքերով յանձնեց Արտաշատի իշխան Մազենտին՝ որ ձգի Արտաշատի մահապարաների խոր վիրապը։ Ա. Գրիգոր 286—301 թ. մնաց վիրապում, ուր, ըստ ժողովրդական աւանդութեան, մի կին օրը մի կտոր հաց էր ձգում։

ԴԼ. Բ.

Տրդատ Ա. Գրիգորին Արտաշատի մահապարաների վիրապը ձգելուց, Հայաստանին տիրելուց, և բոլոր թշնամիններին նկուն անելուց յետոյ հանգիստ էր վայելում, երբ Հռովմայեցւոց կայսրների հալածանքից աղատուելու համար Ասիա փաթխան եօթանասուն անձինք քահանայք և կոյսեր՝ որոնցից 36 կոյսեր երեք քահանաների ուղեկցութեամբ և Ա. Գայիանէի հսկովութեամբ եկան Հայաստան։ Կոյսերի մէջ էր հրաշագեղն ու աստուածային իմաստութեամբ զարգարուած իշխանագուն կոյսն Հռովմայի։ Կոյսերը սկզբում բնակութիւն հաստաեցին Վասպուրականի Արագ սարում, ուր Ա. Հռովմայի թողնելով իւր կրած խայը, որ այժմ

յայտնի է Վարագայ Ս. Խաչ անուամբ, իւր ընկերների հետ եկաւ Արարատեան գաւառուը և բնակութիւն հաստատեց Վաղարշապատ մայրաքաղաքի այգեստանների հնձաններում:

Տրդատ յանձնարարութիւն ստանալով Դիոկղետիանոսից Ս. Հըռ-ռիփսիմէին կամ յետ — Հռովմ՝ դարձնելի կնութիւն կայսեր, կամ ամուսնանալ նորա հետ՝ եթէ կրկամենայ՝ — իսկոյն խնդրակիներ ուղարկեց, որոնք Ս. Հռիփսիմեանց գտան Վաղարշապատի հնձան-ներում և իմաց տուին թագաւորին՝ պատմելով Ս. Հռիփսիմէի հրաշալի գեղեցկութիւնը: Տրդատ հրամայեց մեծ շքով Ս. Հռիփ-սիմէին արքունիք բերել, բայց սուրբ կոյսը մերժեց: Վերջապէս երբ Տրդատ Ս. կուսին բռնի արքունիք բերելուց յետոյ տեսաւթէ համոզելու համար կանչուած Ս. Գոյիանէն հակառակն է համո-զում, և թէ, անհնար է Ս. Հռիփսիմէին իրան կամ կայսեր հարժաշնել, բոլոր կոյսերին էլ նահատակել տուեց 301 թ.

Սուրբ կոյսերի նահատակութիւնից յետոյ Տրդատ մնատան-ջութիւնից մոլեգնութեան մէջ ընկառ, և խողի բնութիւն ստա-ցաւ: Աստուծոյ հրեշտակը տեսիլքի մէջ յայտնումէ Տրդատի քոյր Խոսրովիդխատին թէ, մրայն Արտաշատու մահապարտների խոր վիրապի մէջ ընկած Գրիգորը կարող է բժշկել Տրդատին: Խոսրովիդուխատ պատմումէ իր տեսիլքը, ոկզբում չեն հաւա-տում թէ Գրիգոր կարող էր այնքան երկար ժամանակ կենդա-նի մնալ, բայց երբ տեսիլքը մի քանի անդամ կրկնվումէ, 0-տայ նախարարը ուղարկվումէ Արտաշատ և վիրապից հանումէ կենդանի նահատակ Ս. Գրիգորին և բերում: Մոլեգնեալ Տրդ-դատին, որ ժողովրդեան հետ Վաղարշապատի քողարագունից դուրս ընդ առաջ էր ելած Ս. Գրիգոր աւոմքով փոքր ինչ զգա-տացրեց, ոկտեց քարոզել և առաջին գործն եղաւ նահատակուած կոյսերի մարմինները ամիսովիել նոցա պատառուուն զգեստնե-րով իրանց բնակութեան հնձաննում, մինչեւ նոցա նահատակու-թեան տեղը մատուռներ կը կառուցուէին: Ս. Գրիգոր պատուիրեց հաւատացեալ թագաւորին և այլոց հինգ օր ապաշխարել ծոմ և պահք պահելով և իւր քարոզութեան 66 րդ օրը բարովին բժշկելով Տրդատին՝ նորա աշխատակցութեամբ շինեց Ս. կոյսերի անուններին յատկացեալ վկայարամները: Խնդն Տրդատ անձամբ բրումէր կոյսերի հանգստեան տեղը, իսկ նորա կին Աշխէն տիկինն ու Խոսրովիդուխատ քոյրը բբած հազը իրանց քզանցքներով դուրս

էին թափում։ Կուսանաց վիայարանները շինելուց յետոյ, Ա. Գրիգոր խաչ տնկեց և որմափակ անել տուեց այն տեղը, ուր տեսլեան մէջ տեսել էր Միածնի իջնելլ Հայաստան աշխարհի կենդրօնը, քրիստոնէութեան լոյսը այն տեղից Հայաստանի զորս կողմը ցուցացնելու համար։

Ա. Գրիգոր Տրդատին քրիստոնէական հաւատի մէջ հաստատելուց յետոյ, նորա հետ շրջելով Հայաստանի զանազան կողմերը կործանեց հեթանոսական բազմաստուածութեան մեհեաններն ու բազինները և ամենայն տեղ կանգնացրեց Քրիստոսի Սուրբ Խաչը։

Եւ այսպէս Հայաստանի մեծագոյն մասը Քրիստոսի աւետարանին աշակերտելուց յետոյ առաջարկեց Տրդատին և Հայոց աշխարհի իշխաններին, որ մի հովիւ ընտրեն հաւատացեալներին միլտելու, եկեղեցու սուրբ խորհուրդները մատակարարելու և եկեղեցական արարողութիւնները կատարելու համար։ Տրդատի հրամանով ժողովուեցին կուսակալները, նախարարները, և զօրքերի գլխաւորները և միաբանութեամբ՝ Ա. Գրիգորին ընտրեցին իրանց հովուապետ^{*})։ Այսպիսով սկիզբն զրուեց Եկեղեցու հովուապետի ընտրողական սկրզբունքին հենց առաջին հայրապետից, իսկ այս սովորութիւնը անազարտ և անկորուստ մնաց Հայ եկեղեցու մէջ, որով և եկեղեցին բուն ազդային ժողովրդական եկեղեցի դարձաւ։ Այս ազգային ընտրութիւնը Ա. Գրիգոր ըլմերեց, ուստի Տրդատի կարգադրութեամբ և թղթով՝ տասն և հինգ մեծամեծ նախարարների և բազմաթիւ մարդկանց հետ՝ թանկագին ընծաներով գնաց Կեսարիա, և Ա. Թագէոս առաքեալի յաջորդ Կապագովիլիայի Վ. Ա. մղիս եպիսկոպոսից 302 թ. Հայաստանեայց հովուապետ ձեռնազրուեց։ Ա. Գրիգոր Վ. Ա. մղիսից Ա. Յովհաննու Կարապետի և Աթանազինէ եպիսկոպոսի մասունքները ստանալով վերադարձաւ, ուղեկից ունենալով նաև Անտոն և Կրօնիգէս կրօնաւորներին։ ճանապարհին Աերաստիայում մի քանի օր մնաց, և տեղւոյն քրիստոնեաներից ընտրեց արժանաւորներն ու գրագէտները Հայաստանում քահանայ ձեռնազրելու համար։ զանազան տեղերից հրաւիրեց յոյն և ասորի եպիսկոպոսներ, վարդապետներ և եկեղեցու այլ և այլ պաշտօնեաներ, և այսպիսի խուռն բազ-

մութեամբ մտաւ Հայաստան՝ զանազան տեղեր վանքեր հաստա-
տելով, եկեղեցիներ կառուցանելով և քարսպելով: Նա կործան-
ուած մեջեանների և բագինների գանձերի մի մասը աղքատ-
ներին բաժանելուց յետոյ՝ միւս մասը յատիացրեց քրմագետ-
ների մանուկներին: նոցա քրիստոնէութեան մէջ վարժեցնելու
չամար:

Ա. Գրիգոր Կեսարիայից դառնալիս Տարօն Հաստած ժողովակ
յաց որ Խնճակնեան կոչուած տեղը գեւ կանգուն կան Գիտանէ, և
Գիմետր կուռքերի արձանները. երբոր կամեցաւ այս արձաններն
էլ կործանելու հզօր ընդդիմութեան հանդիսաց. սկսուեց արիւնա-
հեղ ուստերազմ՝ քրմագետ Արձանի ու նորա Դիմեար որդու և
Հայ Հաւատացեալների մէջ, այս պատերազմին փոքր էր մնում
որ Ա. Գրիգորի կեանքն էլ զոհ գնար, բայց սպատերազմը վերջա-
ցաւ Արձանի և Դիմետրի մահուամբ, և Ա. Գրիգոր խսկոյն կործա-
նուած կուռքերի տեղ կանգնացրեց Քրիստոսի Ա. խաչը: և զե-
տեղելով այնտեղ Յովհաննու Կարապետի մասունքից, Յովհաննէս
Կարապետի անուամբ մի եկեղեցի շինեց՝ այնուղ թողնելով Անտօն
և Կրօնիդէս և նոցա ընկեր կրօնաւորներին՝ որոնք յափազանց
խոտակրօնութեան համար խոտաճարակ են կոչվում. վանահայր
և Տարօնոյ եպիսկոպոս կարգեց Զենոք Գլակին, որի անունով վան-
քը կոչվումէ Գլակայ վանք: Ա. Գրիգոր Տարօնու գաւառի մեջեան-
ները և բագինները կործանելուց և տեղւոյն ժողովրդեսնն ու
նոր հետ եղած նախարարներին մկրտելուց յետոյ ուղեւորեց
գէպի Արարատեան նահանգը, ուր մեծ շքով ընդունուեց Տրդաս
թագաւորից, որ լսելով նորա վերագարձը՝ Աշխէն տիկնոջ, Խոս-
րովիդիստի և բազմաթիւ զօրքերի հետ Վաղարշապատից գուրս
գալով Բագրեանդ գաւառի Բագռան գիւղաքաղաքում ամսօրեաց
ժամանակով սպասումէր նորա գալստեանը: Ա. Գրիգոր Տրդատին
և Հաւատացեալ բազմութեանը մկրտեց Եփրամ (Արածանի)
գետում և մկրտութեան տեղը Յովհաննու վանքը շինելով՝ ամէու-
փեց այն տեղ Ա. Յովհաննու Կարապետի մասունքից: Այս վանքը
այժմ՝ կոչվումէ Ռւէքիլիսէլ վանք:

Ա. Գրիգոր Տրդատ թագաւորի հետ (որի անունը մկրտութեան
ժամանակ փոխել էր Յովհաննէս) վերագարձաւ Վաղարշապատ և
նոր տեղեան համեմատ ի պատիւ իջման Միածնի՝ 303 թ. շինեց

այն տաճարը՝ որ կողմումէ Եջմիածին որ գարձաւ ամենայն Հայոց Հայրապետութեան Մայր Աթոռ *):

Ա. Եջմիածնի շինութիւնից յեսոյ Ա. Գրիգոր Տրդատի հետ շրջագայեց բոլոր Հայաստանի մէջ. քարոզեց Քրիստոսի աւետարանը, մկրտեց հաւատացեալներին, և նոցա հովիւ կարգեց Կեսարիայից և Աերաստիայից հետը բերած եպիսկոպոսներին, վարդապետներին ու քահանաներին։ Որովհետեւ հայերէն գրագիտութիւն չըկար, ասորերէն և յունարէն լեզուների համար գալուցներ հաստատեց՝ ժողովեց այն տեղ քրմերի և այլ ցանկացողների որդւոցը, յաջողակներին քահանայ ձեռնադրելով՝ քարոզիչ կարգեց, որոնց թիւը 400 ից անց էր. ոոցա կարգիցն էր Ալբիանոս աբբունի դրան եպիսկոպոսը։ Ա. Գրիգոր կուսանոցներ, վանքեր և մենաստաններ հաստատեց՝ գլխաւոր կարգելով Կապագովկիայից հետը բերած կրօնաւորներին, և տեսնելով որ քրիստոնէութիւնը արմատակալել է Հայաստանում՝ ինքն առանձնացաւ։

Տրդատ թագաւորը երբար լսեց Արտաւազդ Մանդակունուց թէ Ա. Գրիգոր ունի երկու որդիք, նոցա ևս բերել տուեց Հայաստան. անդրանիկը Վրթանէս՝ ամուսնացած էր և ունէր երկու որդի Գրիգորիս և Յուսիկ, իսկ կրտսերը Արիստակէս կրօնաւոր էր։ Տրդատ Արիստակէսին և Վրթանէսին առաւ և գնաց Ա. Գրիգորի մօտ և ինդրեց որ եթէ ինքն Գրիգոր կամենումէ առանձնանալ, գոնէ իւր տեղը յաջորդ ձեռնադրի իւր Արիստակէս կրօնաւոր որդուն։ Գրիգոր լսեց Տրդատին և գալով Վաղարշապատ՝ 318 թ. Արիստակէսին ձեռնադրեց հովուապետ Հայաստանեայց եկեղեցւոյ։

Գ.Լ. Դ.

Քրիստոնէութիւնը, որ այնքան հալածվում էր, սկսել էր իւր փրկարար ազգեցութիւնն ունենալ, վասն զի Վրացիք 317 թ. քրիստոնեայ գարձան քարոզութեամբ նունէ կուսի, որ Հռիփսիմեանց ընկրներից էր։ Ա. Նունէի, Վրաց Միհրան թագտորի և մեծա-

(*) Ա. Եջմիածնի նաւակատեաց տօնը, իւր՝ յանուն Ա. Աստուածածնի եղած աւագ խորանի համար կատարվումէ Ա. Աստուածածնի Վերափոխման շաբաթ օրը. ամբողջ ինն օրը տօն է կատարվում ի պատիւ վերափոխման Ա. կուսին և նաւակատեաց Ա. Եջմիածնի՝ որով և սկզբնաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ։

մեծների խնդրանոք Ա. Գրիգոր Վրացիներին մկրտելու և հովուելու համար քահանաներ և եպիսկոպոսներ ուղարկեց. այսպիսով Վրաց եկեղեցին մինչեւ Կիւրոնի հաւատոյս մի լինելով Հայաստանեայց եկեղեցւոյ հետ՝ միանգամայն գտնվումէր Հայոց Հայրապետի բարձրագոյն իրաւասութեան ներքոյ, և Վրաց կաթողիկոսը Հայ Հայրապետից էր ընդունում սուրբ օծումն:

Բայցի Վրաց առաջնորդ Միհրանից՝ Հռովմայեցւոց Կոստանդիանու կայսրն ևս խաչի գրօշով ոգեորուած իւր թշնամիներին յաղթելուց յետոյ՝ ընդունեց քրիստոնէութիւնը և սկսեց պաշտպանել քրիստոնեաներին, իսկ Կոստանդիանոսի մայրը Հեղինէ թագուհին գնաց Երուսաղէմ և 327 թ. գտաւ Քրիստոսի Ա. խաչը:

Թագաւորների հալածանքը քրիստոնէութեան գէմնոր էր սկսել թուլանալ և նոր քրիստոնէութիւնը սկսել էր յայտնի համարձակ պաշտուիլ: Արիս Աղէքսանդրացին սկսեց քարոզել թէ Որդին Աստուած ոչ Հօր հաւասար, ոչ Հօր ընութիւնից ու Էութիւնից և ոչ յառաջ քան զյաւիտեանս Հօրից ծնուածէ, այլ օտարէ — արարած և կրտսեր, և ժամանակից յետոյ գոյացած: Արիսի աղանդը դատապարտելու և ճշմարիտ հաստատելու համար՝ Կոստանդիանոս կայսեր հրամանով Բիւթանիայի Նիկիա քաղաքում 825 թ. առաջին տիեզերական ժողով կազմուեց 318 հայրապետների ներկայութեամբ՝ ուր էր և Ա. Գրիգորի կողմից նորա որդին և փոխանորդը Արիստակէս: Արիս դատապարտուեց և կայսեր հրամանով աքսորուեց, Արիսի աղանդը հերքող ի շարս միւս հայրապետների՝ Ա. Արիստակէս հաւատոյ նոր հաստատած հանգամանակը և ժողովի վճիռը 20 յօդուածներով բերեց Հայաստան: Ա. Գրիգոր Նիկիոյ ժողովի հաւատոյ հանգամանակը և վճիռը ընդունեց հանգամանակի վերայ աւելացնելով՝ Խոկ մեք փառաւորեցուք՝ յաւելուածը, իսկ կանոնները փոքր ինչ ընդարձակեց իւր Հօտի աւելի և ս զգուշութեան համար *):

Ա. Գրիգոր բոլոր ազգը քրիստոնէական լուսաւորելուց յետոյ, իրան յաջորդ թունելով իւր որդի Ա. Արիստակէսին՝ ինքն առանձնացաւ մի քանի ամիս Դլակայ վանքը, այնուհետև մեկուսանալով Դարանաղեաց զաւառը, Ա. Մանեայ կուսի այրը՝ այն տեղ

(*) Խոր գելք Բ. ՊԼ. Դ.

էլ վախճանուեց անյայտութեան մէջ, մինչեւ իւր վերջին մեկուսանալը 30 տարի վարելով Հայաստանեացց հովուապետութեան պաշտօնը: Ա. Գրիգորի մահից յետոյ նորա մարմինը թաղեցին հսկիւները, ուստի երկար ժամանակ անյայտ մնաց մինչեւ որ Գոռնիկ անունով մի ճգնաւոր գտաւ և թաղեց Թորդանում: Ա. Գրիգոր սոսկալի տանջանքներով և օրինակելի եռանգով ազգը քրիստոնեայ գարձնելու համար Լուսաւորիչ է կոչվում, և երախտագէտ ազգը տարբին երեք անդամ՝ տօնումէ նորա Ա. յիշատակը՝ չարչարանքի և Արտաշատի վիրապի մէջ ձգուելու յիշատակը՝ մածի պահոց մէջ, վիրապից դուրս գալու և առաքելութեան գործը ռիսելու յիշատակը՝ Հռիփսիմետանց տօների շարաթ օրը, իսկ Նշխարաց գիւտի տօնը Յունիս ամսի մէջ:

Նիկոլօ ՏիեզերԱկն Ա. ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐ *).

Նիկոլօ տիեզերական Ա. Ժողովի կանոնների համառօտ ամփոփումն Ա. Յօդ. Նորան, որ հիւանդութեան, բժշկուելու և կամ հեթանոսների ձեռքով է զրկուած իւր մարմնոյ անդամներից՝ կարգի և աստիճանի մէջ արժան է պահել. իսկ նոցա, որոնք մարդկանց առաջին սուրբ երկալու համար կեղծաւորաբար կամովին կտրել են իրանց անդամներից մէկը, պէտքէ կարգընկեց անել. այնպիսիքը եկեղեցուց գուրս հօթն տարի պէտքէ ապաշխարեն, հօթն տարուց յետոյ ջնրմեռանդն զշշումը տեսնելով՝ եկեղեցի թողնեն և հաղորդեն, միայն եկեղեցական պաշտօնէից կարգին պէտք է չըխառնուեն. եթէ ապաշխարութեան ժամանակ հիւանդանան՝ հաղորդել, իսկ առողջանալուց յետոյ պարտաւորել՝ որ շարունակեն ապաշխարանքը:

Բ. Առանց փորձելու և ստուգելու՝ աղանդաւորներին չըձեռնազրել Գ. Նոցա, որոնք անչափահաս, օրինաց անտեղեակ, թեթևամբաւ անուղղայ և գինեմոլ են՝ սարկաւագ չըձեռնազրել: չըձեռնազրել նոյն պէս եթէ օտարերկրեայ և անծանօթ են:

Դ. Հայրապետը եպիսկոպոս պէտք է ձեռնազրի երեք եպիսկոպուների մասնակցութեամբ:

Ե. Եթէ մի հոգեւորական առանց անձնական նկատման (կրքերի) մէկին ապաշխարութեան է ենթարկել, ուրիշը իրաւունք չունի արձակել ապաշխարողին, բացի համազելուց և գէպի ապաշխարութիւն յորդորելուց. և որպէս զի ներդաշնակութիւն լինի Քրիստոսի եկեղեցու մէջ, տարին երեք գաւռառական ժողով կազմել:

(*) Այսօդք դուժաժածած կանոնադիրք. դուժած ԱՄՁ Թուին Հայոց:

Զ. Ե. յօդուածները վերաբերումն մայրաբաղաքների եպիսկոպոսների իրաւանց *),

Ը. Նորա, որոնք կամենումն մտնել հոգեոր կոչման մէջ, պէտք է (հաւատոյ) խոստովանութիւն տան և ձեռնադրութեն։

Թ. Արոշումէ որ իւրաքանչիւր քաղաքում կամ գաւառում մի եպիսկոպոս պէտք է լինի և ծուխի վերայ մի քահանայ։

Ժ. Եթէ մէկը առանց քննութեան քահանայացել է, և ազա նշմարուել է պահանութիւն կամ արատիք՝ եկեղեցին պէտք է չընդունի ոչ նորան և ոչ նորա պաշտօնավարութիւնը։

ԺԱ. Եթէ մէկը անարժաններից օծուց՝ յայտնուելուց յետոյ՝ պէտք է կարգալոյն լինի. իսկ եպիսկոպոսը եթէ գիտութեամբ կամ կաշառքի է օծել, պատուհասի տակ պէտք է մնայ։

ԺԲ. ԺԳ. ԺԴ. ԺՑ. վերաբերումն զանազան մեղսագործութեանց և յանցանքին համեմատ ապաշխարութեան։

ԺԵ. Նորա, որոնք կամենումն մկրտուել (չափահանների համար) չորս տարի պէտք է սովորեն հաւատոյ օրէնքներն ու կանոնները, մի տարի ես պէտք ապաշխարեն և յետոյ մկրտուեն։

ԺԶ. Խռովարար հոգեորականներին (քահանաներին և քորեպիսկոպոսներին) որոնք կրծքուն յափշտակել ուրիշի վիճակը, և անուղղակի ըմնան, պէտք մերժել կոչումից։

ԺԷ. Շահասիրութեան համար իւր իսկական կոչման անփոյթ, վաշխառութեամբ պարապող հոգեորականին՝ եթէ անուղղայ մնայ՝ մերժել կոչումից։

ԺԸ. Միայն սրբազնագործ պաշտօնեայն պէտք է կատարէ սուրբ խորհուրդները (մկրտութիւն և հաղորդութիւն), սարկաւագները պէտք է միայն սուրբ խորհրդի մատակարարութեան սպասաւորեն։

Ի. Ապօղինարի ազանդից **) գարձողներին նորից մկրտել. և եթէ հարկ լինի ձեռնադրել՝ մեծ զգուշութիւն հարկաւոր է գործ գնել։

(*) Այս յօդուածները Ախողի կանոնդրֆում պյառէս են գրուած։ —

Զ. Յօդ. Համարնեաց սովորութիւն կայցէ յէգիպտոսի, զի Աղեքասանդրու եպիսկոպոսն ամենեցուն իշխեցէ. վասն զի Հռովմայեցւոց եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս եւ Անտիոքացւոց եւ այլ իշխանութիւններուն։

Է. Վասն զի սովորութիւն կարտւ եւ կարգն խնայեաց զի Լոռուաղէմի եպիսկոպոսն ապաւեսցի, եւ ընկալցի ըստ կարգին զալատիւն, զի մայրաբաղաքաց է. ըստ արժանոյն պահեսցի պատիւն։

— Այս կանոններից երեւումէ որ եպիսկոպոսապետները միմեանց հաւասար են իշխանութեամբ եւ մէկը միւսի վերայ իշխանութիւնն չունի։

(**) Ապօղինար Լաւողիկէի եպիսկոպոս. իւր անձնապաստանութեամբ մոլորութեան մէջ ընկած՝ համարումէք թէ Բանն Աստուած մարգանալիս՝ առել է միայն մարդկացին մարմին առանց բանական հոգւոց, Կորա կարծիքով՝ Բանն Աստուած էք հոգիաւորում Քրիստոսի մարմին։ Ապօղինարի հետեւօղները կոչվումն Ապօղինաբեամք, Պատմ., Եկեղեց, Խճնատ, վարդ, Փափազ. ի Վենետ 1848. էր. 196.

— Բացի Առատանգիանոսի դատավճռից՝ Նիկիոյ ժողովին վերագրեաբրոդ կանոն կայ 114 յօդուածներով՝ որոնցից 20 ն գրեթէ առաջի կանոնի յօդուածոց համառութիւնն են, իսկ մնացեալները համարեա բացատրական յաւելուածներ։

ՎԱԴԱՐԵՍՊԱՏԻ Ա. ԺՈՂՈՎ.

Թէև Խորենացին չէ յիշում թէ Ա. Գրիգոր Լուսաւորիչ ժողովով ընդունած լինի Նիկիոյ հանգանակը և կանոնները, սակայն զրումէ։ «Սուղ ինչ զլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն (Նիկիոյ) յաւելու վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»։ Նիկիական ժողովի կանոնների՝ Ա. Լուսաւորչին վերագրած երեսուն յօդուած յաւելուածք մեր կանոնագրում զրուած է։ «Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթևի՝ յաւելումն Նիկիականին»^(*)) որ համարվումէ 325 թ. Վաղարշապատի առաջին ժողովի գործ՝ ըստ հաւանական ենթադրութեան թէ։ Ա. Գրիգոր մենակ չէր անիւ այդ յաւելուածը, այլ եպիսկոպոսաց ժողովով։ Յաւելուած կանոնները վերաբերումն ժողովրդեան։ Քահանաների և եպիսկոպոսների պարտաճանաչութեան՝ և յանցանքի համեմատ արուելիք պատիժներին։ Աչա այդ յօդուածներից նշանաւորները։

Ա. Բ. Գ. Յօդուածները ծանր ապաշխարանքի են ենթարկում մեղքի մէջ զառածուած, (թերեւ երկրորդ) կին առնող և վաշխառու քահանաներին։

Դ. Յօդ. Հեթանոսների տներում անխոտիր ուտողները երեք տարի պէտք ապաշխարեն։

Ե. Յօդ. Կուսի հետ պսակուած այրին երկու տարի արտաքոյ եկեղեցոյն և մի տարի ընդ օրինոք պէտք ապաշխարէ։

Ը. Յօդ. Գաղտ պսակ օրհնողին որոշումէ կարգալոյծ անել։

Ժ. Յօդ. Դիւթիչներին հինգ տարի արտաքոյ եկեղեցոյ և մի տարի էլ ընդ օրինոք ապաշխարել տալ, և ապա իբրև ողորմութիւն՝ հաղորդել։

Ճ. Յօդ. Կուսելների վերայ կոծողներին, մազերը կտրողներին, ճակատին խփողներին ի կեանս և ի մահ նզովքի ենթարկել։

Ւ. Անապատականներին արգելել եկեղեցու խորհուրդը ժողովը դիմումը դին մատակարարել։

Ի. Խոստովանութիւն յայտնող քահանային կարգալոյծ անել և հոգեւորականութիւնից մերժել։ յայտնելով միանգամայն որ, չըխոստովանողի մեղքը խոստովանանք յայտնող քահանայի վերայ կըլլինի։

ԻՊ. Պոռներութեան համար պատուիրումէ արձակել կինը՝ և մի տարի սրբուել։

(*) Պատմ. Ժողովոց. Ա. 3:

ԻԴ. Ճգնութեան համար իւր կնոջը թողնող մարդուն նգովումէ:

ԻԵ. Արբեցող քահանաները, սարկաւագները և զպիրները առանց զջջան պէտքէ չըմօտենան պատարագի կամ ժամերգութեան:

ԻԶ. Կաշառառուն, հոգեորական լինի թէ աշխարհական, կախարդ Սիմոնի *), մատնիչ Յուդոյի, և բորոտ Գէեղիի **) մեղսակից է:

ԻԹ. Նզոված է զուր տեղ նզովող քահանան:

Ա. Գրիգոր Լուսաւորչին վերագրվումէ նաև հետեւալ վերնազրով կանոնները. • ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԳԱՑ և ԿԱՆՈՆԻ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵՒԻ, « դարձեալ հարցումն և պատասխանիք նոցա և երկու ճառօրէն զրուածքներ, որոնց առաջնի մէջ խօսվումէ յատկապէս վանքի և եկեղեցու մասին, իսկ երկրորդի մէջ՝ հոգեորականների, եկեղեցեաց և վանքերի հասոյթների մասին, որպէս զի նորա միջոց ունենան իրանց ապահովել և պատսպարել կարօտեալներին ***):

Գլ. Գ.

Ա. Գրիգոր լուսաւորչին 332 թուին յաջորդեց իւր որդին Արիստակէս՝ որ իւր հօր պէս իւր ստանձնած պաշտօնը ամենայն որբութեամբ կատարեց. շինեց միանձնոց համար վանքեր, և Ծոփաց աշխարհի Խոգան, գիւղաքաղաքում մի եկեղեցի հաստատեց:

Ա. Արիստակէս հայրապետը առանց քաշուելու յանդիմանումը ուղղութիւնից շեղուած նախարարներին, այս իսկ պատճառով Զորբորդ Հայոց Արքեպայոս իշխանը 339 թուին սպանեց նորան Ծոփած գաւառում, և ինքն փախաւ Կիլիկիայի Տարսոն քաղաքը: Ա. Արիստակէսի մարմինը նորա աշակերտները տարան Եկեղեցեաց գաւառը և թաղեցին Քիլ աւանում, որ Տրդատ տուել էր Լուսաւորչին սեպհականութիւն:

Ա. Արիստակէսին իւր մահից յետոյ նոյն տարին յաջորդեց իւր անզրանիկ եղբայր Վրթանէսը, որ իւր հօր և եղբօր նման անձանձիր քարոզումէր և յորդորում գէպ ի քրիստոնէական տուարինութիւն և բարոյականութիւն:

Ա. Վրթանէսը կամենալով աւելի պայծառացնել եկեղեցու պաշտամունքը՝ խնդրեց և ստոցաւ նրուսալէմի Մակարիս Արքեպիսկոպոսից ութն յօդուածով մի կանոն: Իսկ Ա. Յակով Մծբայ

(*) Գործք Ա. Ա. Ա. Գ. 18—25:

(**) Զորբորդ Թադ. Գ. Ա. 20—27:

(***) Պատմ. Ժող. Եթես 25—32:

Հայրապետից հաւասարյ վերաբերեալ տեղեկութիւններ. այդ գրքուածքը՝ որ 18 գլուխ է բաժանուած՝ կոչվումէ Զգօն։ Ա. Վ. Ք. Պ. Թ. Ա. Ն. Է. Մակարիսով կամոնը ընդունելով ինքն ևս մի քանի յաւելուածներ կցեց և ուզարկեց իւր ստորագրեալ բոլոր եպիսկոպոսներին։ որ ըստ այնում միապէս կատարեն եկեղեցու պաշտամունքը։

Թէ և Տրդատ թագաւորը Վ. Պ. Թ. Ա. Ն. Է. Հայրապետի հետ միշտ աշխատումէր քրիստոնէութեան սկզբունքը արմատացնել Հայաստանում և ազգի վարքն ու բարքը քրիստոնէական առաքինութեամբ ազնուացնել. բայց նախարարները, որ սնուած էին կրտապաշտութեան մէջ, և ընդածին մոլութիւնը թագաւորել էր նոյա հոգու և որոի վերայ, միշտ գէպի հեշտասիրութիւն և կռապոշտական վեղիսութիւն ու մոլութիւններն էին հակիում. ուստի, երբոր տեսաւ թէ զիւրին չէ նախարարների միջից հակաքրիստոնէական սովորութիւնները հեռացնել, միշտ չը վրագովելու համար՝ առանձնացաւ Աեպուհ սարը և այնտեղ ճգնումէր. նախարարները զիմելով նորան թափանձեցին, որ վերադառնայ և վարէ իւր թագաւորութեան պաշտօնը, խոստանալով այնուհետեւ քրիստոնէակայիել կեանք վարել. երբ որ Տրդատ յանձն չառաւ վերադառնալ արքունիք, մահուան թոյն տուին և այսպէս 341 թ. սպանին Հայաստանի լուսաւորութեան և քրիստոնէութեան ինհամակալիքն՝ որի մարմինը թաղուեց Ամուրն — Անիում։ Տրդատ 85 տարի ասպեց 56 տարի թագաւորելով։

Միանգամ երբ Ա. Վ. Պ. Թ. Ա. Ն. Է. Տարօնոյ Ա. Կարապետի վանքումն էր, նախարարների թելատրութեամբ տեղւոյն լեռնային ժողովուրդը կամեցաւ նորան էլ սպանել, բայց սուրբը ազատուեց, և գնալով Թիլ աւանը, ուր թաղուած էր Արիստակէս, այնտեղ մնաց սգալով Հայոց աշխարհի վերայ, որի անիշխանութեան պատճառով նախարարները միմեանց վերայ վերկացած՝ միմեանց կոտորումէին։

Տրդատի կինը Աշխէն և քոյրը Խոսրովիդուխտ կոյսը հրամարուելով աշխարհային վայելչութիւններից, ընակուեցին Գառնի քաղաքի ամրոցում որ նոր որձաքարերով նորոգել էր Տրդատ։

Տրդատի մահից յետոյ նախարարները ինքնապուխ մնալով ամեն անկարգութիւններ անումէին։ Տեսնումէր Ա. Վ. Պ. Թ. Ա. Ն. Է. և հոգով չոփի ցաւումէր, բայց չէր կարողանում անկարգութեան առաջքը առնել։ Փայտուիսրան աշխարհը, որ Աղուանից աշխարհի հետ յանձնուած էր Անհատրուկ իշխանին, նորա թելատրութեամբ

ապատամբուեց։ Եւ Աանատրուկ իրրեւ արշակունի՛ թագ դնելով ևսածումէր տիրել բոլոր Հայաստանին։ Նոյնը մտածումէր նաև Աղճնեաց աշխարհի Բակուր իշխանը։ Այս ազմկալից ժամանակին, Քղնունեաց Գնունեաց և Մանաւագեանց նախարարութիւնները միմեանց կոտորելով վերջացան բոլորովին։ Այս աղէտները տեսնելով նախարարները՝ Ժողովուեցին Ա. Վրթանէսի մօտ, և Վրթանէս նախարարների խարհրդով, թուղթ գրեց*) Կ. Պօլսոյ Կոստանդ կոյսեր՝ Խնդրելով Տրդատի որդուն Խոսրովին թագաւորեցնել Հայոց վերայ, և այս այն պատճառով որպէս զի յունաց պաշտպանութիւնը վայելեն պարսից յարձակումների ժամանակ։ Կոստանդ կայսրը ընդունեց Հայրապետի խնդիրը և 344 թ. Հայաստանի վերայ թագաւորեցրեց Խոսրովին, այն պայմանով որ նա մտերմութնամբ ծառայէ յունաց։ Ա. Վրթանէս տեսնելով Խոսրովի թուլութիւնը, իշխանների երկպառակութիւնը և պարսիկների ու հիւսիսականների արշաւանքը գէտի Հայաստան, ամեն հնարք գործ էր դում, որպէս զի այդ արշաւանքները կրօնին վասնգ ըլքերեն։ Եւ Խոսրովի մահից յետոյ, որպէս զի նախարարները անգլուխ չըմնան և աւելի ևս խռովութեան տեղի չըտան՝ 353 թուին Ժողովեց նոցա և նոցա հաճութեամբ Խոսրովի որդուն Տիրանին առաւ գնաց Կոստանդնուպօլիս և նորան Հայաստանի թագաւոր կարգել տալով վերագարձաւ։

Ա. Վրթանէս եկեղեցին ապահովելու համար աշխատումէր Ժողովուրդին հարստահարութիւններից ու հալածանքներից ազատ՝ անդորրութեան մէջ պահել։ Վտանգաւոր թշնամին քրիստոնէութեան և Հայոց Արշակունի հարստութեան՝ էր պարսից թագաւորութիւնը, որից անմտանգ մնալու համար՝ նա աշխատումէր Յունաց հետ լաւ յարաբերութեան մէջ պահել Հայոց աշխարհը։ և այս այն պատճառով որ յոյները քրիստոնէութիւնները մէջ գործ պիտի դնէին քրթողնել քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ թուլանայ։ և նախարարները, որոնք հեշտասիրութիւնները և դանազան մոլութիւնները սանձարձակ կատարելու համար, միշտ հակըլում էին գէտի ի կռապաշտութիւն՝ կը զգուշանային ակնածետի Հայրապետից և կայսրից, իսկ Արշակունի հարստութիւնը, որ նիկած էր, և քիչ էր մնում բոլորովին անհետանար, յունաց

(*) Խոր. զիր. Գ. զւ. Զ.

սպաշտպանութեամբ կարող էր տոկալ և որչափ էլ Սասանեան հարստութիւնը, իւր քաղաքականութեան հետեւելով՝ կամենար Հայաստանից ևս վերջացնել Արշակունի Հարստութիւնը, կակնածէր Յունաց կայսրութիւնից, նախարարներն էլ որ այս բանում համամիտ էին պարսից՝ կրզգուշանային։ Ա. Վրժանէս ոչ թէ որպէս Արշակունիներին ցեղակից՝ անխոնջ տքնումէր Արշակունի Հարստութիւնը Հաստատուն պահելու համար, այլ Հաստատ գիտէր թէ այդ Հարստութիւնը բարձուելուց յետոյ՝ նախարարների անմիաբանութիւնից և փառասիրութիւնից օգուտ քաղելով սրարսիկները՝ պէտք է բոլորովին տիրապետէին երկրին, և նոր ծաղկել սկսող քրիստոնէութիւնը պէտք է աշխատէին բառնալ Հայաստանից։ Այսպիսի հոգածութեամբ Ա. Վրժանէսը տասն և հինգ տարի ամենայն արժանաւորութեամբ Հայաստանեացց հայրապետութիւնը վարելուց յետոյ վախճանեց 355 թուին։

—Ա. Վրժանէս, իւր հայրապետութեան առաջին տարին Տրդատի հաճութեամբ և Աղուանից խնդրանօք իւր անդրանիկ որդուն—Գրիգորիսին 340 թ., ձեռնադրեց Վրաց և Աղուանից արքեպիսկոպոս, որ թէ և պատանի հասակով, բայց ծերի փորձառութեամբ կատարեց իւր պաշտօնը։ 342 թուին Տրդատի մահից յետոյ Փայտակարանի և Աղուանից մոլիք և վատարարոյ նախարարները Անատրուկ իշխանի խորհրդով, նահատակեցին Ա. Գրիգորիսին։ Կասպից ծովի մօտ՝ Վատնեան գաշտում ձիու ագիկից կապած քաշտալով։ Ա. Գրիգորիսի մարմինը նորա աշակերտները քերին Փոքր—Սիւնիք և թաղեցին Ամարաս կոչուած տեղը, որ գարձաւ Աղուանից կաթուղիկոսութեան Աթոռ։ Գրիգորիսի մահուամբ թէ պէտ Աղուանից իշխանները ազատուեցին նորա խրատական յանդիմանութիւններից, բայց քրիստոնէութիւն անհետ ցեղաւ Աղուանից աշխարհից՝ որ Վրաց եկեղեցու հետ Հայոց ընդհանրական հայրապետի իշխանութեան ներքոյ կառավարվումէր ամենայն սիրով։

—Ա. Վրժանէսի օրով Մանամիհր Խշունեաց իշխանը հարաւային սահմանները ապահովիլու համար ապստամբ Բակուր Բդեշխին յաղթելուց յետոյ՝ տեղւոյն ժողովրդեան հետ գերեց նա և Ա. Ցակովը Մծբնայ հայրապետի^(*)) ուժն սարկաւագներին։ Ա. Ցակովը

(*) Ա. Ցակովը Մծբնայ հայրապետը՝ Ա. Գրիգոր Լուսաւորչի հօրաքիոռդին էր ըստ պատմութեան։

խնդրեց Մանամիհրից որ արձակէ գերեալ ժողովրդին և իւր սարկաւագներին, բայց տեսնելով թէ իւր ինզիրը անլսելի է մնում, դիմեց թագաւորին. Մանամիհր իմանալով այս՝ բարկացաւ և սարկաւագներին ծովն ձգեց. Ա. Յակովը յուսաբեկ անիծելով Մանամիհրին՝ գարձաւ իւր տեղը, իսկ Խորով թագաւորն ու վրթանէս հայրապետը հրամայեցին Մանամիհրին արձակել զերեալ ժողովրդին^{*)}:

ԿՈՆՈՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑ ՄԱԿԱՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ^{**)}

Ա. Յարկաւագները հանգիսաւոր մկրտութիւն չանեն, եթէ անեն՝ պատճուեն. իսկ եթէ անգիտութեամբ արել են, ներուի. Բ. Մկրտութեան աւազանը եկեղեցում լինի, իսկ եթէ պատահի այնպիսի տեղ, ուր եկեղեցի և աւազան չը գտնուին, պէտք է մկրտել, ուր որ ջուր լինի, երեք անգամ ընկղզելով ջրի մէջ. Գ. Եկեղեցականները ամենայն խոնարհութեամբ կարգ պահեն իւրաքանչիւրը իւր աստիճանի համեմատ, յանաւանդ եկեղեցու մէջ. Դ. ***)^{***} Սրբութեան իւղը եպիսկոպոսապետն պէտք է օրհնի, բայց եթէ հեռաւորութեան պատճառով անհնար լինի փոխադրութիւնը, եպիսկոպոսապետի հրամանով՝ տեղւոյն եպիսկոպոսը ուրիշ մի կամ երկու եպիսկոպոսի հետ օրհնի. իսկ մկրտութեան և հիւանդների օծման իւղը քահանան էլ կարող է օրհնել. Ե. Աչ ոք չը համարձակուի խղճիւ մեղաց կամ թերահաւատութեամբ մօտենալ Ս. Հաղորդութեան. Զ. Ա. Պատարագի ժամանակ չը գտնուի այնտեղ հերետիկոս. Է. Ֆերմ (Ժարմ) հաց և անապակ զինի սարկաւագի ձեռքով հանուի սեղանը, և քահանան օրհնի, ու հաղորդութեան խորհուրդն կատարի. Ը. Խորհրդի սեղանը նոյնպէս և բհմն ունենան վարագոյր. բեմի վերայ լինին միայն խորհրդի սպասները, իսկ մնացեալ անօժները դուրսը:

Յ. Վ. Ա.

(Կը շարունակուի):

(*) Խորհրդի պիտի պահանջանակ է.

(**) Համբաւ աւագանութիւն պահանջանակ է միայն պահանջանակ առէնքով:

(***) Գ. յօդուածը մերժուած է միայն եկեղեցական օրէնքով: